Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20>> ծածկագրով ՀՀ Լոռու մարզի <<Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց>> ՊՈԱԿ-ում հիմնանորոգման (հատակի բարձրացում և հիմնանորոգում, սանհանգույցի հիմնանորոգում) աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

09 հոկտեմբերի 2017թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա.Հովսեփյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ս.Մաթևոսյան / գնահատող /
	Ա.Քոչարյան /գնահատող/
	Ն.Մարտիրոսյան / բացող /
	Ն.Մանուկյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Ն.Հարությունյան

1. 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Հովսեփյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- << ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված <<Բազալտշին>> ԱԿ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

- Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով գնահատող հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել են առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և կոմիտեի կողմից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Հովսեփյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետը և գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Բազալտշին>> ԱԿ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Հովսեփյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Հովսեփյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա.Հովսեփյան

Անդամ՝ ---------- Ս.Մաթևոսյան

---------- Ա.Քոչարյան

---------- Ն.Մարտիրոսյան

---------- Ն.Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն.Հարությունյան